ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1908 «28» 12 2021թ.

Ձեր

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջական միակողմանի լուծելու մասին

01.03.2021 թվականին ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության կարիքների համար փաստաթղթերի դասակարգման ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով ՀՀ ոստիկանության և Ալեքսանդր-Մ ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՊՊԳՎ/ԳԿ ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

Ալեքսանդր-Մ ՍՊԸ-ի կողմից ծառայության մատուցումը չի իրականացվել պայմանագրով սահմանված ժամկետում, ուստի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է զեկուցագիր ծառայությունների չկատարաման վերաբերյալ:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունը կազմակերպության կողմից չի իրականացվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՊՊԳՎ/ԳԿ ծածկագրով պայմանագիրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի ամբողջական լուծում է պայմանագիրը :

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունից կգանձվի որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները, համապատասխանաբար

Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Ինեկոբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայանգրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 245000 (երկու հարյուր քառասունհինգ հազար) և 24500 (քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ոստիկանության

Վ.Մովսիսյան